ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 մայիսի 2011 թվականի N 735-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՌԵԺԻՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐԻ ՌԵԺԻՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 24-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության պետական սահմանում սահմանային ռեժիմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերի ռեժիմը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2011 թ. հունիսի 3
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
մայիսի 12-ի N 735-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՌԵԺԻՄԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության պետական սահմանում սահմանային ռեժիմը (այսուհետ՝ սահմանային ռեժիմ) սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանում պատշաճ կարգ ապահովելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և այլ անձանց սահմանային շերտ մուտք գործելու, այնտեղ ժամանակավորապես գտնվելու, տեղափոխվելու, տնտեսական և այլ գործունեություն իրականացնելու հետ կապված հարաբերությունները կարգավորելու նպատակով: Սահմանային ռեժիմը չի ներառում Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերի ռեժիմը:

2. Սահմանային ռեժիմի պահպանման միջոցառումները կազմակերպում և իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերը (այսուհետ՝ սահմանապահ զորքեր)՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱԱԾ) այլ համապատասխան ստորաբաժանումների, ինչպես նաև պետական այլ մարմինների, պաշտոնատար անձանց, քաղաքացիների և կազմակերպությունների հետ՝ սահմանային շերտի բնակչության մասնակցությամբ:

II. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՇԵՐՏ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3. Սահմանային շերտ մուտքը սահմանվում է հաղորդակցության ուղիների վրա տեղադրված նախազգուշացնող նշանով՝ համաձայն N 1 ձևի: Նախազգուշացնող նշանը տեղադրվում է սահմանային շերտ մուտքի տեղերում և կանաչ գույնի վահանակ է, որը պատվում է լույսն անդրադարձնող նյութով: Վահանակի վրա գրառումը կատարվում է դեղին կամ սպիտակ տառերով՝ հայերենով, ռուսերենով և անգլերենով: Նախազգուշացնող նշանի չափսերն են՝

1) լայնությունը՝ 0,7 մ.

2) երկարությունը՝ 1,0 մ.

3) տառերի բարձրությունը՝ 10 սմ (7 սմ).

4) տառերի լայնությունը՝ 7 սմ (3 սմ).

5) տառերի միջև հեռավորությունը՝ 5 սմ.

6) բարձրությունը գետնից մինչև վահանակ՝ 1,5 մ:

4. Սահմանային շերտ սույն գլխի 6-րդ կետում չնշված անձանց և տրանսպորտային միջոցների մուտքը (ելքը) իրականացվում է անհատական կամ խմբային անցագրերով՝ անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում՝ սույն հավելվածի 3-րդ գլխում նախատեսված կարգով:

5. Սահմանային շերտ անձանց ու տրանսպորտային միջոցների մուտքի (ելք) անհատական կամ խմբային անցագիրը (այսուհետ՝ անցագիր, եթե այլ բան չի նշվում) սահմանված ձևի՝ համաձայն NN 2 և 3 ձևերի (որոնք, ըստ անհրաժեշտության, կարող են թարգմանվել այլ լեզուներով), փաստաթուղթ է, որը հիմք է սահմանային շերտ անձանց ու տրանսպորտային միջոցների մուտքի համար: Տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալները գրառվում են սահմանային շերտ մուտք գործող անձանց անցագրերում:

6. Առանց անցագրի սահմանային շերտ կարող են մուտք (ելք) գործել՝

1) տվյալ սահմանային շերտում գտնվող բնակավայրում (համայնքում) մշտապես բնակվող անձինք՝ անձը հաստատող փաստաթղթով.

2) տվյալ սահմանային շերտում գտնվող բնակավայրի (համայնքի) տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձինք՝ ծառայողական վկայականներով.

3) արտակարգ իրավիճակների (երկրաշարժ, ջրհեղեղ, սողանք, հրդեհ և այլն) հետևանքները վերացնող փրկարարական ստորաբաժանումներում ընդգրկված անձինք, հրշեջները, ինչպես նաև անհապաղ անհրաժեշտությամբ մուտք գործող անձինք (շտապ բժշկական օգնության դեպքերում կամ վարակիչ հիվանդությունների օջախների համաճարակաբանական հետազոտության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի աշխատողների, կենդանիների վարակիչ կամ զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների օջախներում պայքարի կազմակերպման և իրականացման նպատակով անասնաբույժ մասնագետների մուտք գործելու դեպքում և այլն)՝ ծառայողական փաստաթղթով, իսկ մերձավոր ազգականի ծանր հիվանդությունը կամ մահը հավաստող փաստաթղթերի (կամ դրանց պատճենների) առկայության դեպքերում՝ անձը հաստատող փաստաթղթով.

4) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի ստորաբաժանումների զինծառայողները՝ զորամասի հրամանատարի կամ իրավասու այլ պաշտոնատար անձի կողմից ստորագրված ցուցակով կամ ծառայողական կարգագրի, գործուղման, արձակուրդային թերթիկի հիման վրա (նրանց ընտանիքի անդամները՝ ծառայողական կարգագրի կամ արձակուրդային թերթիկի հիման վրա՝ անձը հաստատող փաստաթղթով).

5) ՀՀ ԱԱԾ-ի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության, հարկային կամ

մաքսային մարմինների, պետական այլ մարմինների ներկայացուցիչները, ինչպես նաև կազմակերպությունների այն աշխատողները, ովքեր իրականացնում են տեղական և միջազգային փոխադրումներ կամ փոստի փոխանակում և փոխադրում կամ ապահովում են երկաթուղային, ավտոմոբիլային ճանապարհների, ջրային ուղիների, համապատասխան տրանսպորտային միջոցների, ինչպես նաև նավթամուղերի, գազամուղերի, կապի և էլեկտրահաղորդման գծերի ու էլեկտրահաղորդիչների վերանորոգում կամ շահագործում, կամ իրականացնում են շրջակա միջավայրի՝ կենդանական և բուսական աշխարհի (այդ թվում՝ անտառների ու բնության հատուկ պահպանվող տարածքների), ջրային ռեսուրսների, մթնոլորտի, հողերի, ընդերքի ուսումնասիրություններ, մոնիթորինգ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ դրանց օգտագործում, շահագործում կամ պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողություն՝ ծառայողական վկայականներով և իրավասու պաշտոնատար անձի կողմից տրված գործուղման թերթիկներով.

6) սահմանային շերտում գտնվող բնակավայրի (համայնքի) դպրոցի, հիվանդանոցի կամ այլ կազմակերպության սպասարկող անձնակազմը և այդ հաստատություն հաճախող անձինք (եթե նրանք բնակվում են սահմանային շերտից դուրս) համապատասխան հաստատության ներկայացրած ցուցակի ու անձը հաստատող փաստաթղթի հիման վրա.

7) անչափահաս անձինք՝ միայն օրինական ներկայացուցչի ուղեկցությամբ և անձը հաստատող փաստաթղթով, իսկ այն չունենալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրված լուսանկարի առկայությամբ համապատասխան տեղեկանքի հիման վրա.

8) միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների ներկայացուցիչները՝ անձը հաստատող փաստաթղթով և միջազգային

պայմանագրով նախատեսված այլ փաստաթղթով:

(6-րդ կետը փոփ. 30.11.17 N 1514-Ն)

III. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՇԵՐՏ ՄՈՒՏՔԻ (ԵԼՔԻ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՑԱԳՐԵՐ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

7. Սահմանային շերտ մուտք (ելք) գործելու նպատակով անձը կարող է դիմել տվյալ սահմանային շերտի սահմանապահ ջոկատի պետին, սահմանապահ զորքերի հրամանատարին կամ սահմանային շերտ մուտք (ելք) գործելու թույլտվություն տալու իրավասություն ունեցող ՀՀ ԱԱԾ-ի համապատասխան ստորաբաժանման ղեկավարին:

(7-րդ կետը լրաց. 05.09.19 N 1165-Ն)

8. Սահմանային շերտ մուտք (ելք) գործելու նպատակով ներկայացված դիմումը քննարկվում, և դրան պատասխան է տրվում 10 աշխատանքային օրվա ընթացքում:

9. Անձանց մուտքը սահմանային շերտ, այնտեղ ժամանակավոր գտնվելը ՀՀ ԱԱԾ-ի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ համաձայնեցնելուց հետո թույլատրում է (անցագիր տրամադրում է) սահմանապահ ջոկատի պետը կամ սահմանապահ զորքերի հրամանատարը:

(9-րդ կետը լրաց. 05.09.19 N 1165-Ն)

10. Անձանց կամ կազմակերպություններին տրվում է անհատական (ձև N 2) կամ խմբային անցագիր (ձև N 3)՝ անձի, անձանց կամ կազմակերպության դիմումի հիման վրա՝ համաձայն NN 4, 5 և 6 ձևերի (որոնք, ըստ անհրաժեշտության, կարող են թարգմանվել այլ լեզուներով), որին կցվում է սահմանային շերտ մուտք գործող քաղաքացիների ցուցակը՝ համաձայն N 7 ձևի:

11. Սահմանային շերտում մարդասիրական օգնություն իրականացնող

հանձնախմբերը սահմանային շերտ մուտք են գործում տվյալ պետական կառավարման տարածքային մարմնի միջնորդագրի հիման վրա՝ համաձայն NN 8 և 9 ձևերի (որոնք, ըստ անհրաժեշտության, կարող են թարգմանվել այլ լեզուներով) սահմանապահ ջոկատի պետի կամ սահմանապահ զորքերի հրամանատարի կողմից տրված անցագրով:

(11-րդ կետը լրաց. 05.09.19 N 1165-Ն)

12. Սահմանապահ ջոկատի պետը կամ սահմանապահ զորքերի հրամանատարն անցագիրը տալիս է դիմումատուի մատնանշած ժամկետով, բայց ոչ ավելի, քան տվյալ տարվա վերջը:

(12-րդ կետը փոփ. 05.09.19 N 1165-Ն)

13. Անցագրում նշված ժամկետը լրանալուց հետո մեկամսյա ժամկետում այն վերադարձվում է տվյալ տեղամասում տեղակայված՝ իրեն հատկացված տարածքում սահմանային գոտի մուտք գործող անձանց և այդ տարածքում նրանց տեղաշարժի նկատմամբ հսկողություն իրականացնող սահմանապահ ուղեկալին:

IV. ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՇԵՐՏ ՄՈՒՏՔԻ (ԵԼՔԻ) ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

14. Սահմանային շերտ մուտքը (ելքը) իրականացվում է միայն այն սահմանապահ ուղեկալի տեղամասում, ում անվամբ դուրս է գրված անցագիրը, գործուղման թերթիկը:

15. Սահմանային շերտ անձանց մուտքի (ելքի) պայմանները պահպանելու, նրանց ժամանակավորապես գտնվելու, բնակվելու, տեղափոխվելու, տնտեսական և այլ գործունեություն իրականացնելու նկատմամբ վերահսկողությունը սահմանապահ զորքերն իրականացնում են՝

1) պահպանվող տեղամասում՝ սահմանային շերտ անձանց մուտքը, ժամանակավորապես գտնվելը տնտեսական գործունեության շրջանները դիտարկելու միջոցով.

2) սահմանային շերտ մուտք գործող, երկաթուղային կայարանում, ավտոկայանում կամ ավտոկայարանում գտնվող տրանսպորտային միջոցների և թռչող սարքերի (ժամանելիս և մեկնելիս), ինչպես նաև սահմանային գոտում ժամանակավորապես գտնվող, բնակվող, տեղափոխվող, տնտեսական և այլ գործունեություն իրականացնող անձանց՝ փաստաթղթերն ստուգելու միջոցով.

3) սահմանային շերտ մուտք (ելք) գործող տրանսպորտային միջոցների, դրանցով փոխադրվող բեռների և այլ գույքի զննման միջոցով.

4) սահմանապահ ուղեկալի ճակատային գծից դեպի թիկունք վերակարգեր ուղարկելու միջոցով.

5) սահմանային ռեժիմն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության և ՀՀ ԱԱԾ-ի մարմինների անմիջական մասնակցությամբ համատեղ միջոցառումներ իրականացնելու միջոցով:

16. Անցագրերով մուտքը սահմանային շերտ իրականացվում է սահմանապահ վերակարգերի միջոցով: Մուտքի անցագրերը հաշվառվում են համապատասխան մատյաններում՝ համաձայն N 10 ձևի:

Հայաստանի Հանրապետության

կառավարության աշխատակազմի

ղեկավար **Դ. Սարգսյան**

Գև N 1

Սահմանային շերտ մուտքի տեղերում տեղադրվող նախազգուշացնող նշանի նմուշը



ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ _____N_____ (սերիան) (համարը) _____ (սահ մանապահ ջոկատը՝ _____ ըստ ուղղության) _____ _____20__ թ. Կ. Տ. ____ _____20 __թ. (անցագիր տալու օրը)	ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆՑԱԳՐԻ ԿՏՐՈՆ Տրված է _____ (անունը, _____ _____ հայրանունը, ազգանունը) մուտք գործելու և _____ տեղաշարժվելու (նշվում է _____ սահմանային շերտի _____ բնակավայրը, մարզը) _____ _____ Մուտքի ու տեղաշարժվելու նպատակը_____ _____ _____ Նրա հետ ժամանելու են երեխաները_____ _____ (նշվում է յուրաքանչյուր երեխայի _____ անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան _____ _____ տարեթիվը) ժամանելու ամսաթիվը_____	ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ _____N_____ (սերիան) (համարը) _____ (սահ մանապահ ջոկատը՝ _____ ըստ ուղղության) _____ _____20__ թ. Կ. Տ. ____ _____20 __թ. (անցագիր տալու օրը)	ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆՑԱԳՐԻ ԿՏՐՈՆ Տրված է _____ (անունը, _____ _____ հայրանունը, ազգանունը) մուտք գործելու և _____ տեղաշարժվելու (նշվում է _____ սահմանային շերտի _____ բնակավայրը, մարզը) _____ _____ Մուտքի ու տեղաշարժվելու նպատակը_____ _____ _____ Նրա հետ ժամանելու են երեխաները_____ _____ (նշվում է յուրաքանչյուր երեխայի _____ անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան _____ _____ տարեթիվը) ժամանելու

Ուժի մեջ է միայն անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում_____

_____

(նշվում է անձը հաստատող փաստաթղթի

_____

սերիան, համարն ու երբ և ում կողմից է տրվել)

Տրանսպորտային միջոցի մակնիշն ու հաշվառման համարանիշը կամ տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN կոդը) և գույնը_____

_____

Անցագիրը վավերական է մինչև ____20 __ թ.

_____ջոկատի պետ սահմանապահ զորքերի հրամանատար

_____ _____ _____

(կոչումը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Անցագիրն ստացա _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

ամսաթիվը_____

Ուժի մեջ է միայն անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում_____

_____

(նշվում է անձը հաստատող փաստաթղթի

_____

սերիան, համարն ու երբ և ում կողմից է տրվել)

Տրանսպորտային միջոցի մակնիշն ու հաշվառման համարանիշը կամ տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN կոդը) և գույնը_____

_____

Անցագիրը վավերական է մինչև ____20 __ թ.

_____ջոկատի պետ սահմանապահ զորքերի հրամանատար

_____ _____ _____

(կոչումը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Անցագիրն ստացա _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(Դարձերեսը)

ԿԱՆՈՆՆԵՐ

1. Անհատական անցագիրն իրավունք է տալիս մուտք գործելու միայն դրանում նշված

բնակավայրը:

2. Անհատական անցագիրը կորցնելու կամ վնասելու դեպքում անհապաղ պետք է դրա մասին հայտնել սահմանապահ զորքերի տվյալ ուղղության մոտակա ստորաբաժանում:

3. Անձինք սահմանապահ շերտում գտնվելիս պարտավոր են մշտապես իրենց մոտ ունենալ անհատական անցագիրն ու ներկայացնել այն ստուգման անձը հաստատող փաստաթղթի հետ միասին՝ սահմանապահ զորքերի համապատասխան զինծառայողի պահանջով:

4. Սահմանային շերտ մուտքի կանոնների, ինչպես նաև այնտեղ գտնվելու և տեղափոխվելու կանոնների խախտումը, ինչպես նաև անցագրի կեղծումն առաջացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

Նշումներ անցագրի ժամկետը երկարացնելու մասին

Անցագրի ժամկետը երկարացվել է մինչև _____ _____20__թ.
_____պատճառով:
_____ ջոկատի պետ
սահմանապահ զորքերի հրամանատար

_____ _____ _____
(կոչումը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ.

_____ _____20 __ թ.

Անցագրի ժամկետը երկարացվել է մինչև _____20__թ.
_____պատճառով:
_____ ջոկատի պետ
սահմանապահ զորքերի հրամանատար

_____ _____ _____
(կոչումը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ.

_____ _____20 __ թ.

(ձևը լրաց. 05.09.19 N 1165-Ն)

Ձև N 3

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	ԽՄԲԱՅԻՆ ԱՆՑԱԳՐԻ ԿՏՐՈՆ	ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆՑԱԳՐԻ ԿՏՐՈՆ

ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ

_____N_____
(սերիան) (համարը)

_____
(սահմանապահ ջոկատը՝

_____
ըստ ուղղության)

_____ _____20__ թ.

Կ. Տ.

____ _____20 __թ.
(անցագիր տալու օրը)

Տրված է _____
(անունը,

_____
հայրանունը, ազգանունը)

մուտք գործելու և տեղաշարժվելու _____
(նշվում է

_____
սահմանային շերտի

_____
բնակավայրը, մարզը)

_____

Մուտքի ու տեղաշարժվելու նպատակը_____

_____

Նրա հետ կցված ցուցակի համաձայն ժամանելու են_____

(տառերով նշվում է ժամանողների թիվը)

ժամանելու ամսաթիվը_____

Ուժի մեջ է միայն անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում_____

_____
(նշվում է անձը հաստատող փաստաթղթի

_____
սերիան, համարն ու երբ և ում կողմից է տրվել)

Տրանսպորտային միջոցի մակնիշն ու

ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ

_____N_____
(սերիան) (համարը)

_____
(սահմանապահ ջոկատը՝

_____
ըստ ուղղության)

_____ _____20__ թ.

Կ. Տ.

____ _____20 __թ.
(անցագիր տալու օրը)

Տրված է _____
(անունը,

_____
հայրանունը, ազգանունը)

մուտք գործելու և տեղաշարժվելու _____
(նշվում է

_____
սահմանային շերտի

_____
բնակավայրը, մարզը)

_____

Մուտքի ու տեղաշարժվելու նպատակը_____

_____

Նրա հետ կցված ցուցակի համաձայն ժամանելու են_____

(տառերով նշվում է ժամանողների թիվը)

ժամանելու ամսաթիվը_____

Ուժի մեջ է միայն անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում_____

_____
(նշվում է անձը հաստատող փաստաթղթի

_____
սերիան, համարն ու երբ և ում կողմից է տրվել)

	հաշվառման համարանիշը_____ _____ _____ Անցագիրը վավերական է մինչև __ _____20 __ թ. _____ջոկատի պետ սահմանապահ զորքերի հրամանատար _____ _____ _____ (կոչումը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը) Անցագիրն ստացա _____ _____ (ստորագրությունը) (անունը, ազգանունը)		Տրանսպորտային միջոցի մակնիշն ու հաշվառման համարանիշը_____ ___ _____ ___ Անցագիրը վավերական է մինչև __ _____20 __ թ. _____ջոկատի պետ սահմանապահ զորքերի հրամանատար _____ _____ _____ (կոչումը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը) Անցագիրն ստացա _____ _____ (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(Դարձերեսը)

ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբային անցագիրն իրավունք է տալիս մուտք գործելու միայն դրանում նշված բնակավայրը:
2. Խմբային անցագիրը կորցնելու կամ վնասելու դեպքում անհապաղ պետք է դրա մասին հայտնել սահմանապահ զորքերի տվյալ ուղղության մոտակա ստորաբաժանում:
3. Անձինք սահմանապահ շերտում գտնվելիս պարտավոր են մշտապես իրենց մոտ ունենալ անհատական անցագիրն ու ներկայացնել այն ստուգման անձը հաստատող փաստաթղթի հետ միասին՝ սահմանապահ զորքերի համապատասխան զինծառայողի պահանջով:
4. Սահմանային շերտ մուտքի կանոնների, ինչպես նաև այնտեղ գտնվելու և տեղափոխվելու կանոնների խախտումը, ինչպես նաև անցագրի կեղծումն առաջացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

Նշումներ անցագրի ժամկետը երկարացնելու մասին

Անցագրի ժամկետը երկարացվել է մինչև _____ _____20__թ.
_____պատճառով:
_____ ջոկատի պետ
սահմանապահ զորքերի հրամանատար

_____ _____ _____
(կոչումը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ.
_____ _____20 __ թ.

Անցագրի ժամկետը երկարացվել է մինչև _____ _____ 20 __թ.

_____պատճառով:

_____ ջոկատի պետ
սահմանապահ զորքերի հրամանատար

_____ _____ _____
(կոչումը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ.
_____ _____20 __ թ.

(ձևը լրաց. 05.09.19 N 1165-Ն)

Ձև N 4

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ հատկացնել անհատական անցագիր մինչև _____ _____ 20___թ.

_____
(մարզը, համայնքը, բնակավայրը, վայրը)

_____սահմանային շերտ մուտք գործելու և տեղաշարժվելու համար:

Սահմանային շերտ մուտքի նպատակը_____:

Սահմանային շերտ մուտք գործելու ամսաթիվը ____ _____ 20 __ թ.:

Իմ մասին հայտնում եմ հետևյալը՝

անունը _____, հայրանունը _____, ազգանունը _____,

ծննդյան տարեթիվը, վայրը _____,

_____,
(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, մարզը, համայնքը, բնակավայրը)

Աշխատանքի (ուսման), զինվորական ծառայության (ծառայության) վայրը _____

_____
(հիմնարկության, կազմակերպության, ուսումնական հաստատության, զորամասի, զբաղեցրած պաշտոնի լրիվ անվանումները)

_____

_____:

Անձնական (ծառայողական) հեռախոսահամարը _____:

Բնակության (ժամանման) վայրը _____:
(անհրաժեշտն ընդգծել՝ նշելով լրիվ հասցեն)

Բնակության վայրի կամ բջջային հեռախոսահամարը _____:

Անձը հաստատող փաստաթուղթը _____
(տեսակը)

_____ , N _____ , տրված է _____
(սերիան) (համարը) (անձը հաստատող փաստաթուղթը

.

_____ , _____ _____20____ թ.
տվող մարմինը) (անձը հաստատող փաստաթուղթը տալու ամսաթիվը)

(Դարձերեսը)

Ինձ հետ լինելու են երեխաներ՝ _____
(յուրաքանչյուր երեխայի ազգանունը, անունը և տարիքը)

_____

Լրացուցիչ տվյալներ, խնդրանք _____
_____
_____
_____

Դիմող _____ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

____ _____ 20 __ թ.

Ձև N 5

Դ Ի Մ Ո Ւ Մ

Խնդրում եմ հատկացնել անձնագիր չունեցող անչափահասին
_____

_____
(մարզը, համայնքը, բնակավայրը, վայրը)

գտնվող սահմանային շերտ մուտքի անհատական անցագիր մինչև ___ _____20__թ.

ժամկետով, որի օրինական ներկայացուցիչը համարվում եմ ես:

Անչափահասի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը՝

անունը _____, հայրանունը _____, ազգանունը _____,

ծննդյան տարեթիվը, վայրը _____,

_____,
(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, մարզը, համայնքը, բնակավայրը)

Անչափահասի անձը հաստատող փաստաթուղթը՝ _____
(տեսակը)

_____ , N_____ , տրված է _____
(սերիան) (համարը) (անձը հաստատող փաստաթուղթը տալու մարմինը)

_____ , _____ _____20__ թ.
(անձը հաստատող փաստաթուղթը տալու ամսաթիվը)

Իմ մասին հայտնում եմ հետևյալը՝

անունը_____, հայրանունը _____, ազգանունը _____,

ծննդյան ամսաթիվը, վայրը _____,

_____,
(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, մարզը, համայնքը, բնակավայրը)

Օրինական ներկայացուցչի հետ կապը _____:
(ծնողներ)

Սահմանային շերտ մուտքի նպատակը _____:

Աշխատանքի (ուսման), զինվորական ծառայության (ծառայության) վայրը _____

_____

(հիմնարկության, կազմակերպության, ուսումնական հաստատության, զորամասի, զբաղեցրած պաշտոնի լրիվ անվանումները)
_____:

Բնակության (ժամանման) վայրը _____
____:
(անհրաժեշտն ընդգծել՝ նշելով լրիվ հասցեն)

Բնակության վայրի հեռախոսահամարը
_____:

(Դարձերեսը)

Անձը հաստատող փաստաթուղթը _____
(տեսակը)

_____ , N_____ , տրված է _____
(սերիան) (համարը) (անձը հաստատող փաստաթուղթը տվող մարմինը)

_____ , _____ _____20__ թ.
(անձը հաստատող փաստաթուղթը տալու ամսաթիվը)

Լրացուցիչ տվյալներ, խնդրանք _____
_____
_____
_____

Դիմող_____ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

____ _____ 20__ թ.

Ձև N 6

_____
(կազմակերպության անվանումը)
_____

Դ Ի Մ Ո Ւ Մ

Խնդրում եմ հատկացնել խմբային անցագիր մինչև ____ _____ 20___թ.

_____
(մարզը, համայնքը, բնակավայրը, վայրը)

_____սահմանային շերտ մուտք գործելու և տեղաշարժվելու համար:

Սահմանային շերտ մուտքի նպատակը_____:

Սահմանային շերտ մուտք գործելու ամսաթիվը ____ _____ 20 __ թ.

Փոխադրամիջոցը _____ , _____ , _____:

Տվյալներ միջնորդված անձի վերաբերյալ՝

անունը_____, հայրանունը_____, ազգանունը_____,

ծննդյան ամսաթիվը, վայրը _____,

_____,
(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, մարզը, համայնքը, բնակավայրը)

Աշխատանքի (ուսման), զինվորական ծառայության (ծառայության) վայրը

_____

_____
(հիմնարկության, կազմակերպության, ուսումնական հաստատության, զորամասի, զբաղեցրած պաշտոնի լրիվ անվանումները)

_____
_____:

Անձնական (ծառայողական) հեռախոսահամարը _____:

Բնակության (ժամանման) վայրը _____:
(անհրաժեշտն ընդգծել՝ նշելով լրիվ հասցեն)

(Դարձերեսը)

Բնակության վայրի հեռախոսահամարը_____:

Անձը հաստատող փաստաթուղթը _____
(տեսակը)

_____ , N _____ , տրված է _____
(սերիան) (համարը) (անձը հաստատող փաստաթուղթը տվող մարմինը)

_____ , _____ _____20__ թ.
(անձը հաստատող փաստաթուղթը տալու ամսաթիվը)

Նրա հետ լինելու են երեխաները _____
(յուրաքանչյուր երեխայի ազգանունը, անունը և տարիքը)

_____

Լրացուցիչ տվյալներ, խնդրանք _____

_____

_____

_____

Ղեկավար_____ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Կ. Տ.
_____ _____ 20 __ թ.

Ձև N 7

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՇԵՐՏ ՄՈՒՏՔ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿԸ

NN ը/կ	ԱՆՈՒՆԸ, ՀԱՅՐԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ	ԱՆՁՆԱԳՐԻ ՍԵՐԻԱՆ, ՀԱՄԱՐԸ	ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ	ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԵՍԱԿԸ	ՀԱՍՑԵՆ	ԱՅԼ ՆՇՈՒՄՆԵՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

_____

Կ.Տ.

Ձև N 8

_____
(կազմակերպության անվանումը)

_____

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Խնդրում եմ հատկացնել անհատական անցագիր մինչև ____ _____ 20___թ.

_____
(մարզը, համայնքը, բնակավայրը, վայրը)

_____սահմանային շերտ մուտք գործելու և տեղաշարժվելու համար:

Սահմանային շերտ մուտքի նպատակը _____:

Սահմանային շերտ մուտք գործելու ամսաթիվը՝ ____ _____ 20 __ թ.:

Տվյալներ միջնորդված անձի վերաբերյալ

անունը _____, հայրանունը _____, ազգանունը _____,

ծննդյան ամսաթիվը, վայրը _____,

_____,
(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, մարզը, համայնքը, բնակավայրը)

Աշխատանքի (ուսման), զինվորական ծառայության (ծառայության) վայրը

_____

_____
(հիմնարկության, կազմակերպության, ուսումնական հաստատության, զորամասի, զբաղեցրած պաշտոնի լրիվ անվանումները)

_____

_____:

Անձնական (ծառայողական) հեռախոսահամարը _____:

Բնակության (ժամանման) վայրը _____:
(անհրաժեշտն ընդգծել՝ նշելով լրիվ հասցեն)

(Դարձերեսը)

Բնակության վայրի
հեռախոսահամարը_____:

Անձը հաստատող փաստաթուղթը _____
(տեսակը)

_____, N _____, տրված է _____
(սերիան) (համարը) (անձը հաստատող փաստաթուղթը տվող մարմինը)

_____, _____ _____20__ թ.
(անձը հաստատող փաստաթուղթը տալու ամսաթիվը)

Նրա հետ լինելու են երեխաները _____
(յուրաքանչյուր երեխայի ազգանունը, անունը և տարիքը)

_____

Լրացուցիչ տվյալներ, խնդրանք _____

_____

_____

_____

Ղեկավար_____ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Կ. Տ.
_____ _____ 20 __ թ.

ՁԵՎ N 9

_____
(կազմակերպության անվանումը)

_____

ՄԻՁՆՈՐԴԱԳԻՐ

Խնդրում եմ հատկացնել _____
(մարզը, համայնքը, բնակավայրը, վայրը)

_____սահմանային շերտ մուտք գործելու և տեղաշարժվելու խմբային անցագիր

մինչև ___ _____ 20___թ.:

Սահմանային շերտ կազմակերպված մուտք է գործելու հետևյալ կատեգորիայի խումբ_____

_____
(քաղաքացիների կատեգորիան և կազմակերպության, միավորման, հիմնարկության, ձեռնարկության,

_____:
հասարակական կազմակերպության անվանումը)

Սահմանային շերտ մուտքի նպատակը _____:
Սահմանային շերտ մուտք գործելու ամսաթիվը ____ _____ 20 __ թ.:

Փոխադրամիջոցը _____ , _____ , _____:
(տեսակը) (մակնիշը) (պետհամարանիշը)

Տվյալներ խմբի ավագի վերաբերյալ՝
անունը _____, հայրանունը _____, ազգանունը _____,
ծննդյան ամսաթիվը, վայրը _____,

_____,
(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, մարզը, համայնքը, բնակավայրը)

Աշխատանքի (ուսման), զինվորական ծառայության (ծառայության) վայրը
_____

_____
(հիմնարկության, կազմակերպության, ուսումնական հաստատության, զորամասի, զբաղեցրած պաշտոնի լրիվ անվանումները)

_____

_____:

Անձնական (ծառայողական) հեռախոսահամարը _____:

Բնակության (ժամանման) վայրը՝ _____:
(անհրաժեշտն ընդգծել՝ նշելով լրիվ հասցեն)

(Դարձերեսը)

Բնակության վայրի հեռախոսահամարը_____:

Անձը հաստատող փաստաթուղթը _____
(տեսակը)

_____ , N _____ , տրված է _____
(սերիան) (համարը) (անձը հաստատող փաստաթուղթը տվող մարմինը)

_____ , _____ _____20__ թ.
(անձը հաստատող փաստաթուղթը տալու ամսաթիվը)

Լրացուցիչ տվյալներ, խնդրանք _____

_____

_____

_____

Ղեկավար _____ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Կ. Տ.
_____ _____ 20 __ թ.

Ձև N 10

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՇԵՐՏ ՄՈՒՏՔԻ ԱՆՑԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆԸ

NN ը/կ	Անցագիրը		Անցագիր տալու ամսաթիվը	Տրանսպորտային միջոցի մակնիշն ու հաշվառման համարանիշը կամ տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN կոդը) և գույնը	Անունը, հայրանունը, ազգանունը	Անցագրի վավերա-կանության ժամկետը	Անցագիրը տալու վայրը	Ստացողի ստորա-գրությունը	Նշում՝ անցագիրը վերա-դարձնելու մասին
	սերիան	համարը							

(ձևը փոփ. 05.09.19 N 1165-Ն)
(հավելվածը փոփ. 30.11.17 N 1514-Ն, լրաց., փոփ. 05.09.19 N 1165-Ն)

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
մայիսի 12-ի N 735-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐԻ ՌԵԺԻՄԸ

1. Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերի ռեժիմը (այսուհետ՝ անցման կետերի ռեժիմ) ներառում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի (այսուհետ՝ պետական սահման) անցման կետերով անձանց, տրանսպորտային միջոցների մուտքի (ելքի), բեռների, այլ գույքի, կենդանիների տեղափոխման կարգը, պետական սահմանի անցման կետերում անձանց ու տրանսպորտային միջոցների գտնվելու և տեղաշարժվելու կարգը:

2. Սահմանային, սանիտարական-կարանտինային, անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական վերահսկողություն և մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով անցման կետերի ռեժիմը պահպանվում և հսկվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի (այսուհետ՝ սահմանապահ զորքեր) ստորաբաժանումների կողմից, իսկ օդանավակայաններում անցման կետերի ռեժիմի պահպանումը և հսկումը սահմանապահ զորքերի կողմից իրականացվում է միայն սահմանային վերահսկողության համար անհրաժեշտ պայմաններն ստեղծելու նպատակով:

3. Այն կազմակերպությունները, որոնց հաշվեկշռում են գտնվում երկաթուղային կայանում, ավտոկայանում կամ ավտոկայարանում տեղակայված անցման կետերը, համաձայնեցնելով սահմանապահ զորքերի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների

կոմիտեի մաքսային մարմինների հետ, ստեղծում են հատուկ սարքավորված կառույցներ (այսուհետ՝ ռեժիմային գոտիներ), որտեղ սահմանային, մաքսային, սանիտարական-կարանտինային, անասնաբուժասանիտարական, բուսասանիտարական, ցամաքային տրանսպորտային անվտանգության ստորաբաժանումների կողմից անմիջապես իրականացվում են սահմանային վերահսկողություն, մաքսային հսկողություն և վերահսկողության այլ տեսակներ: Սահմանապահ զորքերը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային մարմինների և պետական համապատասխան այլ մարմինների հետ համատեղ մշակում են միջգերատեսչական ստանդարտ գործառնական ընթացակարգեր՝ ռեժիմային գոտիներում դրանք կիրառելու նպատակով:

4. Անձանց և տրանսպորտային միջոցների մուտքն ու ելքը պետական սահմանի անցման կետերի տարածք իրականացվում է սահմանապահ զորքերի համապատասխան պաշտոնատար անձանց թույլտվությամբ:

5. Երկաթուղային կայարանում, ավտոկայանում կամ ավտոկայարանում տեղակայված անցման կետերի տարածքով ուղևորների տեղաշարժի, բեռների միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների կայանման տեղն ու տևողությունը որոշվում են համապատասխան տրանսպորտային կազմակերպությունների կողմից՝ համաձայնեցնելով տվյալ անցման կետում գործող սահմանապահ զորքերի և մաքսային մարմինների հետ:

6. Պետական սահմանի անցման կետ (ռեժիմային գոտիներ) մուտքը (ելքը), բացառությամբ օդանավակայաններում գտնվող անցման կետերի, սահմանապահ զորքերը թույլատրում են՝

1) ֆիզիկական անձանց՝ միջազգայնորեն ճանաչված անձնագրի կամ համապատասխան ճամփորդական փաստաթղթի կամ Հայաստանի

Հանրապետություն մուտք գործելիս՝ Հայաստանի Հանրապետության վերադարձի վկայականի կամ ապաստանի հայցի, կամ Հայաստանի Հանրապետությունից ելք գործելիս՝ տվյալ երկրի վերադարձի վկայականի, իսկ տրանսպորտային միջոցներին՝ գրանցման վկայագրի կամ ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթղթերի հիման վրա.

2) սահմանապահ զորքերի զինծառայողներին՝ ծառայողական վկայականների հիման վրա.

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության (բացառությամբ սահմանապահ զորքերի), Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ՀՀ ոստիկանություն), մաքսային մարմինների և պետական այլ մարմինների պաշտոնատար անձանց՝ ծառայողական վկայականների և իրավասու պաշտոնատար անձի կողմից տրված գործուղման թերթիկների հիման վրա, իսկ անհապաղ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու նպատակով համապատասխան մարմինների աշխատողներին՝ ծառայողական վկայականների և անցման տվյալ կետի սահմանապահ զորքերի ստորաբաժանման պետի կողմից տրված 6 x 8 սմ չափեր ունեցող, հայերենով, ռուսերենով և անգլերենով լրացված ժամանակավոր անցագրերի՝ համաձայն N 1 ձևի, հիման վրա.

4) կազմակերպությունների այն աշխատողները, ովքեր իրականացնում են տեղական և միջազգային փոխադրումներ կամ ապահովում են երկաթուղային, ավտոմոբիլային ճանապարհների, ջրային ուղիների, համապատասխան տրանսպորտային միջոցների, ինչպես նաև նավթամուղերի, գազամուղերի, կապի և էլեկտրահաղորդման գծերի ու էլեկտրահաղորդիչների վերանորոգում կամ շահագործում կամ իրականացնում են շրջակա միջավայրի՝ կենդանական և բուսական աշխարհի (այդ թվում՝ անտառների ու բնության հատուկ պահպանվող տարածքների), ջրային ռեսուրսների, մթնոլորտի, հողերի, ընդերքի ուսումնասիրություններ, մոնիթորինգ կամ Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով նշվածների օգտագործում, շահագործում կամ բնապահպանական տեսչական աշխատանքներ՝ ծառայողական վկայականներով և իրավասու պաշտոնատար անձի կողմից տրված գործուղման թերթիկներով.

5) անցման կետերում անձանց և տրանսպորտային միջոցների վերահսկողություն և հսկողություն իրականացնող ծառայությունների, ինչպես նաև անցման կետերում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատողներին սահմանապահ ջոկատի պետի կամ սահմանապահ զորքերի հրամանատարի կողմից տրվում է 6 x 8 սմ չափեր ունեցող, հայերենով, ռուսերենով և անգլերենով լրացված մշտական անցագիր՝ համաձայն N 2 ձևի, ծառայության կամ կազմակերպության ղեկավարի դիմումի հիման վրա՝ համաձայն N 3 ձևի, որին կցվում է մուտք գործող անձանց ցուցակը՝ համաձայն N 4 ձևի.

6) արտակարգ իրավիճակների (երկրաշարժ, ջրհեղեղ, սողանք, հրդեհ և այլն) հետևանքները վերացնող փրկարարական ստորաբաժանումներում ընդգրկված անձինք, հրշեջները, ինչպես նաև անհապաղ անհրաժեշտությամբ մուտք գործող անձինք (շտապ բժշկական օգնության դեպքերում կամ վարակիչ հիվանդությունների օջախների համաճարակաբանական հետազոտության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի աշխատողների, կենդանիների վարակիչ կամ զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների օջախներում պայքարի կազմակերպման և իրականացման նպատակով անասնաբուժական մասնագետների մուտք գործելու դեպքում և այլն)՝ ծառայողական փաստաթղթի հիման վրա, իսկ մերձավոր ազգականի ծանր հիվանդությունը կամ մահը հավաստող փաստաթղթերի (կամ դրանց պատճենների) առկայության դեպքերում՝ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա:

(6-րդ կետը փոփ. 30.11.17 N 1514-Ն, լրաց. 05.09.19 N 1165-Ն)

7. Անցման տվյալ կետի սահմանապահ զորքերի ստորաբաժանման պետի կողմից տրված անցագիրն այն ստացող անձին իրավունք է տալիս գտնվելու անցման կետի միայն այն վայրում, որտեղ նրանք իրականացնում են իրենց պարտականությունները: Անցման կետ մուտքի անցագրերը հաշվառվում են համապատասխան մատյանում՝ համաձայն N 5 ձևի:

8. Պետական սահմանը հատող անձանց և տրանսպորտային միջոցների բացթողումն ավտոմոբիլային կամ պարզեցված բացթողման անցման կետ սահմանապահ զորքերի համապատասխան պաշտոնատար անձն իրականացնում է պետական սահմանով անձանց և տրանսպորտային միջոցների բացթողման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված տեխնոլոգիական սխեմային համապատասխան: Պետական սահմանով անձանց և տրանսպորտային միջոցների բացթողման տեխնոլոգիական սխեման ավտոմոբիլային և երկաթուղային հաղորդակցության ուղիներում հաստատվում է անցման տվյալ կետի սահմանապահ զորքերի ստորաբաժանման պետի կողմից՝ համաձայնեցնելով անցման կետում վերահսկողություն և հսկողություն իրականացնող մարմինների հետ:

9. Ավտոմոբիլային կամ պարզեցված բացթողման անցման կետ արտահերթ բաց են թողնվում՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարական և խորհրդարանական պատվիրակությունները.

2) դիվանագիտական անձնագրերով անձինք.

3) անձինք, ովքեր մեկնում կամ ժամանում են ազգականների ծանր հիվանդության կամ մահվան մասին առկա բժշկի կամ ՀՀ ոստիկանության համապատասխան իրավասու պաշտոնատար անձի կողմից հաստատված կամ դիվանագիտական ուղիներով ստացված ծանուցագրերով.

4) մարդասիրական օգնություն փոխադրող տրանսպորտային միջոցներն ու դրանց ուղեկցող անձինք՝ օրենքով սահմանված կարգով.

5) մարզական հավաքական թիմերը, որոնք մեկնում կամ ժամանում են միջազգային մրցումների.

6) մինչև 3 տարեկան երեխա ուղեկցող անձինք.

7) երեխաների կազմակերպված խմբեր, որոնք մեկնում են առողջարանական բուժման.

8) կանոնավոր միջպետական ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները.

9) վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրող տրանսպորտային միջոցները.

10) արագ փչացող բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցները.

11) մեծ եզրաչափերով և ծանրաքաշ բեռնատար տրանսպորտային միջոցները.

12) անցման կետում վերահսկողություն և հսկողություն իրականացնող մարմինների պաշտոնատար անձինք, սպասարկող անձնակազմը և տնտեսական գործունեություն իրականացնող անձինք.

13) անհապաղ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու նպատակով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատողները և նրանց փոխադրող տրանսպորտային միջոցները.

14) ՀՀ ոստիկանության և մաքսային մարմինների պաշտոնատար անձինք, ովքեր իրականացնում են տրանսպորտային միջոցների պահպանություն և ուղեկցում, նրանց փոխադրող տրանսպորտային միջոցները՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում.

15) արտակարգ իրավիճակներ առաջանալիս անհապաղ օգնություն ցուցաբերելու նպատակով շտապ օգնության, հրշեջ, փրկարարական ծառայությունների հատուկ տրանսպորտային միջոցները և նրանց անձնակազմը, վարակիչ հիվանդությունների օջախների համաճարակաբանական հետազոտության նպատակով Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի աշխատողները, անցման կետերի վերակառուցման և այլ շինարարական աշխատանքներ իրականացնող անձինք և հատուկ տեխնիկան՝ անցման տվյալ կետի սահմանապահ զորքերի ստորաբաժանման պետի ցուցումով:

(9-րդ կետը փոփ. 30.11.17 N 1514-Ն)

10. Հայաստանի Հանրապետությունից մեկնող և Հայաստանի Հանրապետություն ժամանող տրանսպորտային միջոցների ուղևորների նստեցումն ու իջեցումը, ինչպես նաև բեռների ու փոստի բեռնումն ու բեռնաթափումը, բացառությամբ օդանավակայանների, կազմակերպվում են սահմանապահ զորքերի տվյալ ստորաբաժանման և մաքսային մարմինների համապատասխան պաշտոնատար անձանց թույլտվությամբ՝ տեխնոլոգիական սխեմային համապատասխան:

11. Օդանավակայանի, երկաթուղային կայարանի, ավտոկայանի կամ ավտոկայարանի ներքին աշխատանքային կարգը սահմանվում է տրանսպորտային մարմինների կողմից՝ համաձայնեցնելով սահմանապահ զորքերի և մաքսային մարմինների հետ:

12. Սահմանապահ զորքերի պաշտոնատար անձինք վերահսկում են անցման կետերի ռեժիմի կանոնների պահպանումն օդանավակայանների, երկաթուղային կայարանների, ավտոկայանների կամ ավտոկայարանների տեղակայված անցման կետերում:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**

Ձև N 1

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆՑԱԳԻՐ_____
ВРЕМЕННЫЙ ПРОПУСК
TEMPORARY PASSING

Ձև N 2

ՄՇՏԱԿԱՆ ԱՆՑԱԳԻՐ N_ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _

ПОСТОЯННЫЙ ПРОПУСК
Permanent pass

Անցագիրը կրողի ազգանունը, անունը _____
Фамилия, имя владельца пропуска
Pass holder's name, surname

Լուսանկար
фото
photo 3x4
սմ/см/sm

Անցագիրը կրողի կազմակերպությունը, պաշտոնը_____
Организация и положение владельца пропуска
_____
_____

Վավերականության ժամկետը_____
Срок действия
Expiry date

Կնիք կամ
հոլոգրաֆիկ
նշան

Ձև N 3

_____
(կազմակերպության անվանումը)
_____

Դ Ի Մ Ո Ւ Մ

Խնդրում եմ հատկացնել _____ պետական սահմանի անցման
(պետական սահմանի անցման կետի անվանումը)

կետ մուտք գործելու և տեղաշարժվելու անցագիր մինչև ___ _____ 20___թ.:
Անցման կետ մուտքի նպատակը _____:
Անցման կետ մուտք գործելու ամսաթիվը _____ _____ 20 __ թ.

Ղեկավար_____ _____
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Կ. Տ.
____ _____ 20 __ թ.

ՁԵՎ N 4

ԱՆՑՄԱՆ ԿԵՏ ՄՈՒՏՔ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿԸ

NN ը/կ	ԱՆՈՒՆԸ, ՀԱՅՐԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ	ԱՆՁՆԱԳՐԻ ՍԵՐԻԱՆ, ՀԱՄԱՐԸ	ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ	ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԵՍԱԿԸ	ՀԱՍՑԵՆ	ԱՅԼ ՆՇՈՒՄՆԵՐ

ՂԵԿԱՎԱՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ _____

Կ.Տ.

ՁԵՎ N 5

ԱՆՑՄԱՆ ԿԵՏ ՄՈՒՏՔԻ ԱՆՑԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆԸ

NN ը/կ	Անցագրի համարը	Անցագիր տալու ամսաթիվը	Անունը, հայրանունը, ազգանունը	Կազմակերպությունը կամ մարմինը, պաշտոնը	Անցագրի վավերա-կանության ժամկետը	Ստացողի ստորա-գրությունը	Նշում անցագիրը վերադարձնելու մասին

(հավելվածը փոփ. 30.11.17 N 1514-Ն, լրաց. 05.09.19 N 1165-Ն)